բայց միացնում է իր ամբողջ հողամասը։ Ժողովուրդը սիրում է իր երիտասարդ Հանրապետությունը. նրա մէջ արմատացել է անկախության գաղափարը. նա երբեք չի բաժանուի նրանից և երբեք չի զիջի։ Ճիշտ է, մեր առջև, Տաճկահայաստանի փակ դռների յետև, մեր թշնամին շարունակում է կատարել իր մութ գործերը և ինտրիգներ է սերմանում այս կողմը, մեր Հանրապետության սահմաններում։ Բայց ես չեմ կասկածում, որ մենք կը ճեղքենք այդ դուռը մեր մեծ դաշնակիցների հետ միասին, կը տիրենք մեր երկրին, որ ցողած է անհամար մարտիրոսների և հերոսների արիւնով։ Հայ ժողովրդի արեան դատը, անկասկած, պէտք է ստանայ իր նպաստաւոր և արդար լուծումը. այդ դատը մարդկութեան խղճի, պատուի և իրաւունքների դատն է, մարդկային գոյութեան հարցն է, որ ոչ ոք չի կարող ժխտել... Երջանիկ և ոգևորուած եմ ողջունելու մեր առաջին ընտրուած Խորհրդարանը այս պատմական վայրկեանին»։

Ապա ողջունեց դաշնակիցներին ու հարևան պետութիւններին, յանձին նրանց ներկայացուցիչների, և «մեր փառապանծ բանակը, որ հայրենասիրութեան անսահման անձնազոհութեամբ կռուում է՝ պաշտպանելով մեր հայրենիքը արտաքին և ներքին թշնամիներից»։ Խորհրդարանը խանդավառ ծափերով ու յոտնկայս ցոյց արաւ հայ զօրքին։

Երկրորդ նիստում Խորհրդարանը կազմեց իր նախագահութիւնը։ Փարիզից եղած դիմումի վրա, ձևական նախագահ նշանակուեց Ա. Ահարոնեանը, իսկ իրական նախագահներ — փոխ-նախագահներ — ընտրուեցին Լ. Շանթը և Ս. Արարատեանը։ Քարտուղարներ՝ Յ. Տէր-Յակոբեանը (աւագ) և Ա. Սաֆրաստեանն ու Ա. Տէր-Մելքայէլեանը։

Երրորդ նիստում, օգ. 7-ին, 40 քէօով ընդդէմ 8-ի վարչապետ կարգուեց Ա. Խատիսեանը։ Վերջնականապէս կազմուեցին խորհրդարանական 12 յանձնաժողովները, որի մէջ մտան բոլոր պատգամաւորները։ Որոշուեց Խորհրդարանի նիստերը դումարել շաբաթը երկու անգամ՝ երկուշաբթի և ուրբաթ օրերը։

Չորրորդ նիստում, օգ. 10-ին, Յ. Արղութեանի նախագահութեամբ*), վարչապետը յայտարարեց նոր կառավարութեան անդամների ցանկը — վարչապետ և արտաքին գործոց նախարար՝ Ա. Խատիսեան, ներքին գործոց և արդարադատութեան՝ Ա. Գիւլխանդանեան, պաշտպանութեան և ելևմտական՝ Ս. Արարատեան, խնամատարութեան և աշխատանքի՝ Ա. Սահակեան, հանրային կրթութեան և արուեստի՝ Ն. Աղբալեան, զինուորական՝ զօր. Բ. Արարատեան։ Ցանկը վաւերացուեց 37 քէօով 2-ի դէմ, որից յետոյ վարչապետը կարդաց կառավարական յայտարարութիւնը։

Ներկայացնելով Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքական բարդ դրութիւնը, Թիւրք-ադրբէջանեան դաւերը, պաշտպանութեան ու ելևմտական անկայուն վիճակը, անգլիական զօրքերի մեկնումը Կովկասից, հայկական հարցի ընթացքը Հաշտութեան Վեհաժողովում՝ յայտարարութիւնը երկարօրէն կանգ էր առնում կառավարութեան անելիքների և վարելիք քաղաքա-

*) Ս. Արարատեանը նախապէս նշանակուելով՝ հրաժարուել էր, իսկ Լ. Շանթը դեռ չէր եկել Եւրոպայից։